

Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

10/13


531 34

9 2 0

19 NOV 2011



ՅԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ



ԼԵՆԻՆՆ

ՈՒ ԱԼԻՆ



891 99
9-28

ՊԵՏՅՐԱՏ

1925.



1103 VON 2 P.

21.22

28

957

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑ. ԽՈՐՀՐԴ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք.

ՅԵՂԻՇԵ ԶԱՐԵՆՑ

ԼԵՆԻՆՆ ՈՒ ԱԼԻՆ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ — № 209.

Յ Ե Ր Ե Վ Ա Ն — 1925

16.07.2013

48946

ԼԵՆԻՆ ՈՒ ԱԼԻՆ

Տիրաժ 6,000.

Պատճառի յերկրորդ տպարան Յերևանում:



24397-09

1.

Աշխարհի կենտրոնը—Մոսկովը ե:
Մոսկովը Մեկկայից ել հին ե:
Մոսկովից մեծ քաղաք—չիք:
— Քանի վոր Մոսկովի միջին
ապրում ե ինքը—
Լենինը!

Տրապիզոնը Մոսկովից հեռու յե:
Տրապիզոնից Մոսկով—
չես համնի վորքով դու իսկի:
Թե ունես ոսկի՝
կհատես նախ նավ դու
ու նավով կերթաս նախ Բաթում.
հետո գնացք նստած՝
կհամնես Թիֆլիս,
հետո Բազու,
Ռաստով.
հետո կերթան—կերթան
ու նոր
կհամնես Մոսկով:—

Այ, Մոսկովում հենց եդ
ապրում ե արխաղաշ Լենինը:
Նա, վոր մեծ ե, վոնց վոր ամենամեծ խալիֆ:



Մակայն կնպես խալիֆ,
վոր հասկանում ե միշտ փուխարայի հալից:
էս ե պատճառը հենց,
վոր սիրում ե նրան տրապիզոնցի Ալին:

Թիավար ե Ալին մի նավակի վրա:
Մտանում ե ամիսը—

3¹/₂ լիրա *:

Աշխատում ե սակայն առավոտից—գիշեր:

Ու սիրում ե նրան
տերը, վոնց վոր գրաստ,

քշել,

քշել,

քշել!

Սիրում ե Ալին Լենինին:

Նրա մասին նրան

պատմել ե նավաստի մի ուս:

Ցույց ե տվել նրան

պատկերքը Լենինի.

ասել ե.

— Լենին—կառոշ **

Ալին ասել ե.—

— Չոկ.—

Ուռուսն ասել ե.

— Բան.

* Ներկայումս լիրան հավասար ե 1 ուրլու:

** «Կառոշ»—ուսերեն ХОРОШО բան ե, ա-
ղավաղած:

Լենին վար—*

բուրժույ յոկ!—

Բուրժույ—այսինքն դանգին,

այսինքն եֆենդի, աղա,

են, վոր նստում են հանդիստ,

ուտում են ուրիշի քրտինք

ու սիրում են

միշտ

ծովափին

նստել նարդի խաղալ!

Հասկացել եր Ալին.

«Լենին—

բեյուկ խալիֆ!»—

«Բեյուկ ** խալիֆ» սակայն,

վոր հասկանում ե միշտ փուխարայի հալից:

Ու սիրում եր նրան,

եդ Լենինին հեռու

իր չարքաշի սիրով տրապիզոնցի Ալին!...

2.

Եդ որը սուգ եր Մոսկովում

ու սուզը—վան եր:

Վորբացել եր վոնց վոր պրոլետարը:

* Չոկ թուրքերեն նշանակում ե շահ, «վար»—կա,
«յոկ»—չկա:

** Բեյուկ թուրքերեն՝ մեծ:

Ով վոր մոտ եր նրան—
արդեն գիտեր՝
—եւ չկա հարմիր Ղեկավարը..

Փակել եր աչքերը Ղեկավարը,
վոր կյանքում չբանա եւ բնավ:
Քնել եր Ղեկավարը
անզարթնելի քնով:

Եղ որը արդեն երկապեն
հավաքում եր մկան առ մկան
իր ուժերը, վոր պատնեշ կապե
անողոք կորուստի դիմաց:

Եղ որը ամեն պրոլետար
Մոսկովում, Բազվում, Թիֆլիսում
չինել եր իր կամքը—բեռոն
ու հողին—չոգուն.
պողպատել եր կամքը, վոր եզուց
կորուստի տեղ են թանկագին՝
կուռ՝
դնե բյուրմկան մի բուռնցք
Վոստի բկին!

Յերկաթե իր կամքով եղ որը
մեր յերկրում ամեն պրոլետար
ենպես եր զգում, կարծես նոր ե,
կարծես նոր ե յեկել կովի որը
և ինքը գոռ գրոն պիտի տա.

ամփոփե պիտի իր ուժերը,
հավաքե մկանն իր վերջին,
վոր մնա բանվորի դիկտատուրը
ու հաղթե—

առանց Իլյիչի...

3.

Ու թռավ ուղիոն եղ որը,
վոնց վոր թուր աշխարհը կխտղ՝
մահառիթ ուղիոն եղ որը
Մոսկովից հասավ Տրապիզոն:

Եղ որը ենքան եր աշխատել,
վոր հալից ընկել եր Ալին:
Մարմինը քրաինը եր պատել,
բայց պիտի աշխատե՞ր ելի:

Նվում եր ամեն մի մկանը,
նվալով քաշում եր դեպի աուն.
բավական ե, ասում եր,—բավական ե
հոգնությունը քո!...

Յերեկո յեր:

Մութ ծովափով
դնում եր Ալին դեպի աուն:
Ու տեսավ հանկարծ ծովափին
իր ծանոթ նավաստուն ուռա:
Մոտեցավ,

վոր ասի սալամ,
սեղմի ձեռքը՝ ծանոթ վոնց վոր հին,
ու կամաց փսփսա նրան՝

«— Կարաշո՞ւ Լենին!»

Մոտեցավ:

Տխուր եր նավաստին:

Անծանոթ եր դեմքը: Անող:

Ու չստավ մշտական «գրաստի»ն:

Այլ—

կամաց—

«— Այլի՛ Լենին յո՛կ!» *

Ել վոչինչ:

Հեռացավ:

Ու թվաց թե

լեռնացած՝ զարկեց մի ալիք:

Հասկացավ խոսքերի եզ իմաստը
նավաստի Ային...՝

4.

Գիշեր ե:

քնել ե Տրապիգոնը:

Ձի հաջում անգամ մի շուն:

Վոստիկանը սակայն, վոնց վոր շունը—
արթուն ե.

հսկում ե փողոցում:

*) «Յոկ» թուրքերեն նշանակում ե չկա:

Սրթսրթում են սև սոսիները,
փսփսո՞ւմ են վոնց վոր խավարին,
վոր թեկուզ Տրապիգոնը քնել ե,
բայց ահա — արթուն ե Ային!

Գողեգող զնում ե Ային

պատերի տակով դեպի մութը:

Գողեգող զնում ե Ային —

դեպի ո՞ւր. —

— Լոկ ինքը գիտե:

Մոտենում ե ահա կամացուկ

մի շենքի...՝

Կորած խավարում՝

ցուցանակ կա ենտեղ մի ծուռ...՝

նկարած ե վրան —

նա գիտե—

հասարակ—

ՄԱՆԳԱՂ ՈՒ ՄՈՒԲՃ...

Շրջում ե եդտեղ գողեգող

փոստիկանը՝ խեթ ու առուուզ:

Կոչվում ե շենքը քաղաքում—

«ԿՈՆՍՈՒԼԱՏ ՌՈՒՄ»:

Մոտենում ե Ային, վոնց վոր գող:

Անցնում ե մոտից փոստիկանը:

Մահում ե Ալին կողքով—
մոռենում ե դռանը:

Սեղմում ե զանգը:
Չանգից սակայն զի
խոր լուսթյան մեջ
զարկում ե
մի սիրտ:

Բացվում ե դուռը:
Մանում ե ներս:
Լոկ պահապանն ե,
վոր արթուն ե դեռ:

Նա ճանաչում ե
կարգաչ Ալուն.
հաճախ գնացել են մեկտեղ լողալու:

Բայց արդեն գիշեր ե:
Ուշ ե արդեն:
—Ի՞նչ ե հարկավոր Ալուն արդյոք:

—Կճնասուլ...

=Սն-խն...

=Գիշեր ե:

—Ուշ:

Բայց բախտից Ալու—
հյուսպատոսն հանկարծ յեխում ե դուրս:

— «Լենին յ՞մկ»—հարցնում ե Ալին:
Լուսթյուն:

Վոնց վոր մուրճ՝ տաշող:

Ու—

կրճքին խփելով Ալին—
մրմնջում ե.

—Նեթ կարաշո!...*

Յեվ ապա, նայելով գետին,
մի բանից վոնց վոր վախելով
ասում ե՝ դառնությամբ լի.—

—«Ալի պլոխ՝ Ալի—աղլիոր!...»**

Խոնարհում ե գլուխը գետին:

Այնու [վոնց վոր] վիշտ ե հայտնում ու պատիվ—
ե—

հեռանում ե՝ քսվելով պատին...

* Աղավաղված ոտներեն, ուզում ե ասել լավ չե՛:

** «Պլոխ»—ոտներեն ПЛОХО բառն ե, աղավաղ-
ված, ուզում ե ասել. «Ալին վաս ե գգում իրեն, Ալին
լալիս ե»:

5.

Ուրիշ ի՞նչ
Վոչինչ:
Խնդալու,
Կամ լալու պատճառ կարծեմ չիք:

— Վողջնւն արխաղաշ Ալուն!
— Հաղթանակ գործին Իլիչի!

1924. 21 XI. Տրապիզոն

Բ. Տ.— Պոեմի նյութը վերցված և իրականությունից: Տրապիզոնի մեր Համամիութենական հյուպատոսն ինձ պատմեց, վոր Լենինի մահվան լուրը Տրապիզոն հասնելու որը, կես գիշերին, իր մոտ և գալիս Ալի անունով մի թուրք նավաստի իր վիշտն ու հարգանքը հայտնելու: Կարծում եմ դեպքն արժանի և ավելի լավ պոեմի, քան սա:

Յե. Զ.



« Ազգային գրադարան



NL0358857

10/2

ԳԻՆԸ 15 ԿՈՊ.

48946

891.99

9 - 28